# ՆԿԱՐԱԳԻՐ

**առաջարկվող ապրանքի ամբողջական**

ԱՐԼԻՎԱՉ ՍՊԸ-ն ՀԿԱԾ-ԷԱՃԱՊՁԲ-25/4 ծածկագրով կազմակերպված էլեկտրոնային աճուրդին մասնակցելու շրջանակում ներկայացնում է իր կողմից առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիրը

| Չափաբաժնի համար | Առաջարկվող ապրանքի<br>տեխնիկական բնութագիրը |
|---|---|
| 1 | ՀՀ արդարադատության նախարարի 2012թ. մարտի 7-ի N 31-Ն հրամանով հաստատված Կիսավերարկու աշնանային-ձմեռային Կարվում է 100% պոլիէստեր բաղադրությամբ, 245 + 5գր/մ2 մակերեսային խտությամբ առաջին կարգի կտորից: Կտորը պետք ունենա յուղակայուն (MBO), ջրադիմացկուն (BO), քամուց պաշտպանող (B3O) հատկություններ՝ ընդ որում յուղակայունությունը ոչ պակաս քան 100 պ.մ., ջրակայունությունը ոչ պակաս քան 100 ջրային կաթիլ/մմ, օդի թափանցելիությունն ոչ ավել քան 25 դմ3/մ2ս: Կտորի հիմքի պատռման բեռնվածությունը (разрывная нагрузка основы) ոչ պակաս 2,500 Н, թելերի քանակը 10սմ վրա ըստ հիմքի պետք լինի ոչ պակաս 410-ից, ըստ միջնաթելի ՝ 230-ից: Թաց մշակումից հետո գծային չափերի փոփոխությունը չպետք է գերազանցի 2-3%, գույնը՝ սև: Կիսավերարկուն բաղկացած է լանջափեշերից, մեջքից, օձիքից, թևքերից և գլխանոցից: Կիսավերարկուի լանջափեշերը կոճկվում են 5 կոճակով կոճկվող գաղտնակար հանգույցով: Օձիքը կանգուն՝ հանովի արհեստական մորթիով և հետծալման հնարավորությամբ: Օձիքի մորթու գործվածքի 1մ2 մակերեսային խտությունը 700-780 գրամ, խավի բարձրությունը 12մմ, գույնը վառ, արտահայտիչ սև: Օձիքի միացման կարում մշակված է կախիչ: Թիկունքը և լանջափեշերը կրծքամասում վերին կտրվածքով, դեղին գույնի 2.5 մմ լայնքով եզրաքուղով: Լանջափեշերի ներքևի մասում թեք, ներկարված գրպաններ, որոնք թեքված են դեպի ներս, կենտրոնական կոճկվող հանգույցի նկատմամբ 550 թեքությամբ: Կիսավերարկուն ունի ներսից տաքացվող շղթայով հանովի ներդիր, որը մգդակված է մետաքսյա աստառի հետ 300 գ/մ2 խտությամբ տերմոֆինով: Աստառը և տերմոֆինն մգդակված են շեղանկյուն փախլավանաման հյուսքով: աստառի ձախ կողմում ծոցագրպանով: |

| | |
|---|---|
| | Կիսավերարկուի գոտկատեղում տեղադրված է փաքնված գոտկապարան: ուսադիրները հանովի: Փաթեթավորումը՝ եռաշերտ ստվարաթղթե արկղերով, արկղերի մեջ 5 լրակազմ, տեսականին պոլիէթիլենային թափանցիկ պարկերով, մեկ պարկի մեջ՝ 1 լրակազմ: Արկղերի չափսերը պետք է համապատասխանեն կոստյումի չափսերին, որպեսզի կոստյումը չճմրթվի: Արկղերը պիտակավորված, պիտակների վրա պետք է նշված լինի տեսականու անվանումը, քանակը, չափսերը, արտադրող կազմակերպության անվանումը, արտադրման ամիսն ու տարեթիվը և տեխ. պայմանի համարը: Մատակարար կազմակերպությունը պետք է պատասխանատու ստորաբաժանմանը ներկայացնի կտորի բաղադրության, ներկի կայունության և մակերեսային խտության վերաբերյալ՝ ՀՀ-ում հավատարմագրված կազմակերպության կողմից տրված լաբորատոր հետազոտության եզրակացություն: Փորձաքննության դրական արդյունքներից հետո ներկայացնել նմուշ՝ հաստատելու համար համապատասխան ստորաբաժանմանը: Պատվիրատուն իրավունք ունի՝ յուրաքանչյուր մատակարարված խմբաքանակից կատարել նմուշառու և ուղարկել փորձաքննության: Կանանց համար կիսավերարկուի ձևն նույնն է, կոճկվում է դեպի ձախ: |

# ПОЛНОЕ ОПИСАНИЕ

**предлагаемого товара**

АРЛИВАЧ ООО в качестве участника в рамках участия в электронном аукционе под кодом ՀԿԱԾ-ԷԱՃԱՊՁԲ-25/4 ниже представляет полное описание предлагаемого им товара.

| Номер лота | Предлагаемый товар |
|---|---|
| | технические характеристики |
| 1 | |